# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նարինե Խաչատուրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին)
2019 թվականի նոյեմբերի 27-30-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Չինաստանի ժողովրդական հանրապետության մշակույթի և զբոսաշրջության նախարարություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 3-րդ նախարարական հանդիպմանը

2019 թվականի նոյեմբերի 27-30-ը գործուղվել էի Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (Պեկին)՝ մասնակցելու Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 3-րդ նախարարական հանդիպմանը:

Նոյեմբերի 27-ից 30-ը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում կայացած Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 3-րդ նախարարական համաժողովին մասնակցում էին Հայաստանի, Հունաստանի, Չինաստանի, Եգիպտոսի, Իրանի, Իրաքի, Իտալիայի, Պերուի, ինչպես նաև որպես դիտորդ՝ Մեքսիկայի, Հնդկաստանի և Տաջիկստանի պատվիրակությունները:

Համաժողովին հանդես եմ եկել ելույթով: Անդրադարձ եմ կատարել Հայաստանի մի քանի հազարամյա պատմությանը՝ ընդգծելով, որ համաժողովին Հայաստանի մասնակցությունը պայմանավորված է հազարամյակների խորքից եկող ավանդույթներով, հարուստ, շոշափելի և ոչ նյութական մշակութային արժեքներով, որոնք իրենց ազդեցությունն ունեն ոչ միայն տարածաշրջանային այլև համընդհանուր զարգացումների վրա:

Համաժողովի աշխատանքների արդյունքում մասնակից երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունեցին «Պեկինի հռչակագիրը»:

Նույն օրը Չինաստանում ՀՀ դեսպան Ս. Մանասարյանի հետ հանդիպումներ եմ ունեցել Իրանի Մշակութային ժառանգության, ձեռնարվեստի և զբոսաշրջության նախարար Ալի Ասգար Մունեսանի, Եգիպտոսի Հնությունների նախարար Խալեդ Ալ-Անանիի և Չինաստանի Մշակույթի և զբոսաշրջության նախարար Լուո Շուգանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկել ենք նշյալ երկրների հետ Հայաստանի հարաբերությունների հետագա սերտացման և մշակութային ոլորտում համագործակցության խորացման հնարավորություններն ու հեռանկարները:

Հանդիպմանը պարոն Լուոն նշել է, որ Հայաստանը կարևոր գործընկեր է Չինաստանի համար «Մեկ գոտի մեկ ճանապարհ» ծրագրի շրջանակներում և չինական կողմը բարձր է գնահատում մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված Հայաստանի ջանքերը: Հանդիպման ընթացքում նշել եմ, որ չնայած երկու երկրների միջև առկա հեռավորությանը, կան շատ ընդհանրություններ, որոնք պետք է հիմք ընդունել մշակույթի ոլորտում համագործակցությանը զարգացման համար, և առաջարկել՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի շրջանակներում

համագործակցել հնագիտական պեղումների անցկացման ու Հյուսիս-հարավ միջանցքի ճանապարհին հնագիտական պարկի ստեղծման ուղղությամբ: Նշվել է, որ ի շարունակություն Չինաստանում ունեցած նախորդ հանդիպումների, հայկական կողմը լի է պատրաստակամությամբ իրականացնել հայ և չին ստեղծագործողների գործերը միմյանց լեզուներով թարգմանելու ծրագիրը (համաձայն ձեռք բերված պայմանավորվածության՝ հայկական գրականության որոշ գործեր պետք է թարգմանվեին չինարեն, իսկ չինական որոշ ստեղծագործություններ՝ հայերեն): Հատկապես շեշտվել է Մամիկոնյան ընտանիքի պատմության թարգմանության հարցը, քանի որ նշյալ ընտանիքը նաև որոշակի աղերսներ ունի Չինաստանի հետ: Քննարկվել է նաև միասնաբար տարբեր ցուցահանդեսներ կազմակերպելու հարցը:

Պարոն Լուոն ողջունել է հնագիտական պարկի ստեղծման գաղափարը և նշել, որ չինական կողմը պատրաստ է օգնել այդ գաղափարը կյանքի կոչելու հարցում: Այս կապակցությամբ նա նշել է, որ անհրաժեշտ է փորձագետներ ուղարկել՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար: Նա նաև դրական է արձագանքել երկու երկրներում ցուցահանդեսների անցկացմանը և հավելել, որ չինական կողմը պատրաստ է ընդունել հայ ստեղծագործողներին՝ Չինաստանում անցկացվող արվեստի փառատոնների, տարբեր ցուցահանդեսների շրջանակներում, ինչպես նաև իրականացնել արվեստագետների, տարբեր ստեղծագործական խմբերի միջև փորձի փոխանակում: Չինական կողմը նաև պատրաստ է անվճար դասընթացներ կազմակերպել Չինաստանում արվեստագետների և տարբեր ոլորտների՝ այդ թվում և հնագիտության ոլորտի փորձագետների համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխանակել նախընտրելի ոլորտներում համագործակցությանցանկներ:

Միջազգային հարթակներում համագործակցության մասին խոսելիս, պարոն Լուոն անդրադարձել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում ս.թ. դեկտեմբերին Կոլումբիայում կայանալիք քվեարկությանը, նշելով, որ Հնդկաստանը հայտ է ներկայացրել «Sowa Rigpa, knowledge of healing or science of healing» հայտրը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում ընդգրկելու համար, ինչը, թերևս, ընդունելի չէ Չինաստանի համար: Նա նշել է, որ Չինաստանի համար Դալայ Լաման անջատողական հայացքներով աչքի ընկնող քաղաքական անձ է: Ուստի նա խնդրել է հայկական կողմին քվեարկել հաշվի առնելով Չինաստանի հետ հարաբերությունները: Խնդրանքին պատասխանել եմ, որ հայկական կողմը կքննարկի և ի գիտություն կընդունի Չինաստանի դիրքորոշումն այս հարցում և կայացված որոշումը համահունչ կլինի հայ-չինական հարաբերությունների բարձր մակարդակին:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 3-րդ նախարարական հանդիպմանը մասնակցության ապահովում.
2. Պեկինի հռչակագրի ընդունում.
3. Հայ-չինական մշակութային կապերի խթանում.
4. ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում համագործակցության խթանում.
5. Չինաստանի գործընկեր կազմակերպությունների հետ նոր պայմանավորվածությունների ձեռքբերում, համատեղ ծրագրերի մշակում:

04.12.2019

Նարինե Խաչատուրյան